«Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ի տնօրեն՝
Հայարփի Քալանթարյանին
(ք. Երևան, Տիգրան Մեծի 3-րդ նրբ., 22 տուն)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ի միջև 01.03.2018թ.-ին կնքվել է պատրաստի սննդի մատակարարման մատուցման պետական գնման թիվ ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1 պայմանագիր:

Նշված պայմանագրի 1.1-ին կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պատրաստի սննդի մատակարարման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Նշված պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ «Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում»:

Նշված պայմանագրի 2.4-րդ կետի 2.4.1-ին ենթակետի համաձայն՝ «Կատարողը պարտավոր է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ»:

Սույն թվականի հոկտեմբերի 05-ին «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ում 19 հիվանդի մոտ տեղի է ունեցել սննդային թունավորում, ինչի կապակցությամբ անհապաղ իրականացվել են բժշկական բնույթի միջոցառումներ և տրամադրվել է համապատասխան բժշկական օգնություն: Թունավորման պատճառները և բնույթը հայտնաբերելու նպատակով «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Երևանի քաղաքային կենտրոն» մասնաճյուղի կողմից կատարվել են համապատասխան հետազոտություններ:

«ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Երևանի քաղաքային կենտրոն» մասնաճյուղի կողմից 06.10.2018թ.-ի սննդամթերքի մանրէաբանական հետազոտության թիվ 4583 արձանագրության համաձայն՝ մսով բորշի մեջ հայտնաբերվել է պայմանական պաթոգեն մանրէներ:

«ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Երևանի քաղաքային կենտրոն» մասնաճյուղի կողմից թունավորված հիվանդներից 4-ը ենթարկվել են մանրէակրության, վարակակրության վերաբերյալ հետազոտության, մյուս թունավորվածներից 15 հոգի հրաժարվել են հետազոտությունից:

«ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Երևանի քաղաքային կենտրոն» մասնաճյուղի կողմից 06.10.2018թ.-ին տրված մանրէակրության, վարակակրության վերաբերյալ հետազոտության թիվ 1112 արձանագրության համաձայն՝ հետազոտության արդյունքում բոլոր հետազոտված հիվանդների մոտ հայտնաբերվել են Salm.enteriditus տիպի մանրէներ:

ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ի միջև 01.03.2018թ.-ին կնքված պայմանագրի 2.1.1-ին կետի համաձայն՝ «Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ սնուցել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը»:

2018 թվականի հոկտեմբերի 25-ին «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ի ներկայացուցչի հետ համատեղ այդ օրը մատակարարած սնունդը հանձնվել է «ՄԱՎԱՍ Գրուպ» ՍՊ ընկերության փորձարկման լաբորատորիա մանրէաբանական հետազոտության նպատակով:

«ՄԱՎԱՍ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից 01.11.2018թ.-ի սննդամթերքի մանրէաբանական հետազոտության թիվ 568 և թիվ 568/2 արձանագրությունների համաձայն՝ մակարոնով ապուրի, հավի մսով ցորենաձավարով հարիսայի և մասուրի հյութի մեջ հայտնաբերվել են անհամապատասխանություններ:

2018 թվականի նոյեմբերի 08-ի թիվ 4295 գրությամբ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲ ընկերությունը առաջարկել է «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ին վերացնել վերոնշված թերությունները և զգուշացրել է, որ նմանատիպ թերությունները կրկնվելու դեպքում միակողմանի կլուծի պայմանագիրը:

2018 թվականի նոյեմբերի 09-ին «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ի ներկայացուցչի հետ համատեղ այդ օրը մատակարարած սնունդը հանձնվել է «ՄԱՎԱՍ Գրուպ» ՍՊ ընկերության փորձարկման լաբորատորիա մանրէաբանական հետազոտության նպատակով:

«ՄԱՎԱՍ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից 15.11.2018թ.-ի սննդամթերքի մանրէաբանական հետազոտության թիվ 590/2 և թիվ 590/3 արձանագրությունների համաձայն՝ կարտոֆիլով և մսով սոուսի և թանի մեջ հայտնաբերվել են անհամապատասխանություններ:

ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ի միջև 01.03.2018թ.-ին կնքված պայմանագրի 2.1.3-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ «Միակողմանիորեն լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին»:

Փաստորեն, «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ի կողմից խախտվել են պայմանագրի N 1 հավելվածով սահմանված՝ մատակարարվող սննդին ներկայացված պահանջները, ինչը կնքված պայմանագրի 2.1.3-րդ կետի ա) ենթակետի ուժով համարվում է էական պայման և հիմք է պայմանագիրը միակողմանիորեն լուծելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲ ընկերությունը 2018 թվականի դեկտեմբերի 07-ից միակողմանի լուծում է 01.03.2018թ.-ին կնքված պատրաստի սննդի մատակարարման մատուցման պետական գնման թիվ ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1 պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ի գումարներից կնվազեցվեն «ՄԱՎԱՍ Գրուպ» ՍՊ ընկերությանը փորձարկումների դիմաց վճարված գումարի, 2018 թվականի հոկտեմբերի 25-ի և նոյեմբերի 09-ի մատակարարած սննդի և մինչև մրցույթով նոր մատակարարից պատրաստի սնունդ ստանալը՝ մեկ անձից գնման և «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ի պայմանագրով սահմանված գնի տարբերությունը, ինչպես նաև պայմանագրով սահմանված տուգանքները:

«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ տնօրեն՝
Պետրոս Սեմերջյան